

ՀՀ յանցատուր իշխանութիւններու հակադաշնակցական պայքարը կը շարունակէ թիրախաւորել Հ.Յ.Դ. երիտասարդութիւնը

Աւելի քան 24 ժամ երեւանի Զուարթնոց օդակայանէն ներս պահելէ ետք, ՀԵԴ ԱՄՆ Արեւելեան շրջանի երիտասարդական միութեան կեդրոնական վարչութեան անդամ ընկերուհի Արենի Մարկոսեանին կը յայտնեն որ Հայաստան մուտք գործելու իրաւունքէն կը զրկուի եւ Հայաստանի մէջ անցանկալի անձ կը հռչակուի, առանց որեւէ հիմնաւոր բացատրութիւն տրամադրելու:

Այս նեղ գործելաոճը, որ կը կիրարկուի ՀՀ ներկայ իշխանութիւններուն կողմէ, անոր հակահայ դիրքաւորման արտացոլումներէն է եւ կը նպատակադրէ հնարաւոր բոլոր միջոցներով եւ տարբեր մակարդակներու վրայ փորձել կասեցնել եւ խոչընդոտել Հ.Յ.Դ. երիտասարդական համաշխարհային կառոյցի աշխատանքները:

Հ.Յ.Դ. երիտասարդական անդամներուն կապը հայրենիքի հետ մշտական է եւ անբաժանելի: Ընկերուհի Արենին պիտի ժամանէր Հայաստան այցելութեան համար: Ան անցանկալի տարր կը համարուի՝ սփիւռքի մէջ իր տարած ազգանուէր գործին համար եւ Դաշնակցական երիտասարդական գործուն անդամ ըլլալուն պատճառով:

Միեւնոյն ժամանակ երեւանի մէջ կ'իրականացուի Սփիւռքի գլխաւոր յանձնակատարի գրասենեակի կազմակերպութեամբ «Ազգային երիտասարդական Համաժողովը», եւ անդին ազգային գործի լծուած երիտասարդուհի մը կը զրկուի հայրենիք մուտք գործելու իրաւունքէն: Այս հակասութիւնները պարզ կը դարձնեն ներկայ իշխանաւորներու ազգայինի հետ աղերս չունենալու հանգամանքը եւ անոնց օրակարգի շարժիչ ուժը, որ ամբողջովին թշնամու շահերն են:

Յիշեցնենք, որ ամիսներ առաջ կ'արգելուէր Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ ընկեր Մուրադ Փափազեանի, Հ.Յ.Դ. Հոլանտայի «Գարեգին Նժդեհ» երիտասարդական միութեան անդամ Սիւնէ Աբրահամեանի, Հ.Յ.Դ. Հոլանտայի Հայ Դատի ատենապետ ընկեր Մասիս Աբրահամեանի, Հ.Յ.Դ. Ֆրանսայի «Նոր Սերունդ» երիտասարդական միութեան ատենապետ Նժդեհ Գարագաւորեանի եւ Հ.Յ.Դ. Հոլանտայի կառոյցի անդամ ընկեր Ասլան Ասլանեանին մուտքը Հայաստան՝ կրկին առանց որեւէ բացատրութեան:

ՀՀ իշխանութիւններուն հայածանքները, բռնաճնշումները եւ ապօրինի գործողութիւնները յստակ ապացոյցներ են անոր անճարակութեան եւ վախկոտութեան: Այս ստորին գործելաոճը իր դէմ պիտի գտնէ որպէս պատասխան Դաշնակցական երիտասարդութեան արմատաւորուած համոզումները, առաւել ամրացումն ու հայ երիտասարդութեան արդար ընդվզումի ալիքները եւ համախմբուածութիւն ազգային օրակարգի շուրջ:

Հ.Յ.Դ. երիտասարդական անշեղօրէն կը մնայ իր յանձնառութեան եւ սկզբունքներուն հաւատարիմ՝ հակառակ այս մեղապարտ վարչակազմի բոլոր անարգ փորձերուն:

Հայրենիքը մեզմէ անջատելու բոլոր փորձերը պիտի ձախողին եւ պիտի բախուին Դաշնակցական երիտասարդական համահայկական ցանցի բուռն դիմադրութեան:

ՀՅԴ Բիւրոյի Երիտասարդական գրասենեակ

Դաւիթ Իշխանեան ընտրուած է Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահ

Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի պատգամաւորներուն նախաձեռնութեամբ, Օգոստոս 7-ին գումարուած է ԱՀ Աժ արտահերթ նստաշրջան՝ ԱՀ Աժ նախագահի ընտրութեան օրակարգով:

ԱՀ Աժ նախագահի տեղակալ Գագիկ Բաղդուցը շնորհակալութիւն յայտնած է Արթուր Թովմասեանին՝ խորհրդարանական աշխոյժ գործունէութեան, վերջին տարիներուն Ազգային Ժողովի նախագահի պաշտօնի բերումով կատարած աշխատանքներուն համար: ԱՀ Աժ նախագահի թափուր պաշտօնին համար «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցութեան կողմէ առաջադրուած էր «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» խմբակցութեան պատգամաւոր, ՀՅԴ Բիւրոյի անդամ Դաւիթ Իշխանեանի թեկնածութիւնը: Հիմնաւորելով առաջադրուած թեկնածութիւնը՝ ԱՀ նախագահ Արայիկ Յարութիւնեան կարեւորութեամբ նշած է Դաւիթ Իշխանեանի անցած մարտական ու քաղաքական ուղին:

Ելոյթ ունենալով ներկաներուն դիմաց՝ Դաւիթ Իշխանեան շնորհակալութիւն յայտնած է այս վճռորոշ պահուն պատասխանատու պաշտօնը իրեն վստահուելուն համար (խօսքը կարգալ էջ 3):

Թեկնածութեան առաջադրման մասին մտքեր փոխանակած են ԱՀ Աժ բոլոր խմբակցութիւնները: Կայացած գաղտնի քուէարկութեան արդիւնքով 22 կողմ, 9 դէմ ձայներու յարաբերակցութեամբ ԱՀ Աժ նախագահ ընտրուած Դաւիթ Իշխանեան:



Արցախի ժողովուրդի անվտանգութիւնը, բարօրութիւնը եւ զարգացումը բացարձակ առաջնահերթութիւններ են Դաշնակցութեան համար



Դաւիթ Իշխանեանի Արցախի Ազգային Ժողովի նախագահ ընտրուելուն կապակցութեամբ «Ապառաժ»-ի հարցազրոյցը ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր-Խաչատուրեանին հետ, կարգալ էջ 3:

Հորիզոն | www.horizonweekly.ca

HONDA GABRIEL

THE ALL-NEW 2023 HONDA CR-V TOURING HYBRID

KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Արցախի ժողովուրդի անվտանգությունը, բարօրությունը եւ զարգացումը բացարձակ առաջնահերթություններ են Դաշնակցութեան համար

Դաւիթ Իշխանեանի Արցախի Ազգային Ժողովի նախագահ ընտրուելու կապակցութեամբ «Ապառաժ»-ը իր հարցերն է ուղղել ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր-Խաչատուրեանին.

- Արցախի Հանրապետութեան այս ծանր օրերին ՀՅԴ Բիւրոյի անդամ ընկեր Դաւիթ Իշխանեանը ընտրուեց ԱՀ ԱԺ նախագահ։ Ի՞նչ ընթացք է ունեցել ընկեր Իշխանեանի առաջադրումն այս կարեւորագոյն պաշտօնին և ի՞նչ հիմունքներով ՀՅԴ-ն ընդունեց այդ առաջարկը։

-ՀՅԴ Բիւրոն ստացաւ Արցախի ներկայ ու վերջին երկու նախագահներու համախորհուրդ առաջարկը, որպէսզի 'Դաշնակցութիւնը իր դերակատարութիւնը բարձրացնէ Արցախի պետական համակարգէն ներս՝ ընդառաջելով ընկեր Դաւիթ Իշխանեանի ԱՀ Ազգային Ժողովի նախագահ առաջադրելու իրենց խնդրանքին, բնական է, որ մենք ամենայն լրջութեամբ վերաբերուեցանք այդ առաջարկին, միաժամանակ ունենալով մտահոգութիւններ. քաջ կը գիտակցէինք այն ծանր պատասխանատուութեան բեռին, որուն դէմ յանդիման կը դրուէր մեր աշխարհատարած կազմակերպութիւնը։ Գնահատեցինք նաեւ այն իրողութիւնը, որ Արցախի մեր քաղաքական գործընկերները անվերապահօրէն թիկունք կանգնեցան այսպիսի պատասխանատու պաշտօն ստանձնելու առաջարկին։

-Արդեօ՞ք որեւէ պայմանաւորուածութիւն կայացել է այս ընտրութեան նախօրէին։

-Այս առաջարկին կ'ընկերակցէր նաեւ խոստում, որ ԱՀ Ազգային Ժողովի դերն ու պատասխանատուութեան ծիրը պիտի ընդարձակուին եւ խորհրդարանի նախագահը պիտի ունենայ վճռորոշ դերակատարութիւն քաղաքական հիմնական բոլոր գործընթացներումն մէջ, ի մասնաւորի Արցախի կարգավիճակի, անվտանգութեան, բանակցութիւններու եւ առհասարակ արտաքին յարաբերութիւններու ոլորտներուն մէջ։ Ազգային ժողովը ԱՀ-ի ժողովրդընտիր երկու սիւներէն մէկն է՝ Նախագահական հաստատութեան հետ։ Ան լիազօրուած է ներկայացնել ժողովուրդին կամքը եւ խօսիլ անոր անունէն։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ ԱԺ-ի Նախագահն ունենայ

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի նորընտիր նախագահ

Դաւիթ Իշխանեանի ելոյթը Արցախի ԱԺ արտահերթ նստաշրջանում

Մեծարգոյ պարոն Նախագահ

Յարգելի գործընկերներ, ներկաներ

Իրավիճակը եւ պայմանները խիստ արտասովոր են. ընկալելի չի լինի եթէ հանդէս գամ ծրագրային ելոյթով։ Ժամանակի թելադրանքը այնպիսին է, որ առօրեայ խնդիրների լուծումը դարձել է հրամայական, սակայն պէտք է ի մտի ունենալ՝ վճռորոշը նպատակն է ու տեսլականը։

Նախեւառաջ իմ խորին շնորհակալութիւնն եմ յայտնում մեր երկրի համար այս ծանր օրերին պատասխանատու նման պաշտօնում իմ թեկնածութիւնը առաջադրելու համար։ Բոլորս խորը գիտակցումով ենք գնացել այս քայլին՝ հասկանալով, որ ոչ թէ դասական պայմաններում խորհրդարանի ղեկավար կազմ ընտրելու գործընթաց է տեղի ունենում, այլ արտակարգ իրավիճակում է այս որոշումը կայացուում։ Նախկինում եւս Արցախի խորհրդարանի ղեկավարը խորհրդարանում ներկայացուած մեծամասնութիւն կազմող քաղաքական ուժի ներկայացուցիչն էլ էր, այն ժամանակ էլ որոշ հանգամանքներ նման որոշում կայացնելու պատճառ են դարձել։ Սակայն համոզուած եմ, որ այս պարագայում, երբ երկրի վիճակն օրհասական է, նման որոշման ընկալումը յանուն միասնութեան ու որոշումները համախոհութեամբ իրականացնելու շատ աւելի ընդունելի կը լինի։ Դիւրին չէր նաեւ որոշում կայացնելու գործընթացը։

Պատասխանատու այս պաշտօնը պարտաւորեցնող է, ժամանակն ու կացութիւնը առաւել եւս։

Ազգային ժողովին ԱՀ Սահմանադրութեամբ տրուած է առաջին հերթին օրէնսդիր գործունէութեամբ զբաղուելու լիազօրութիւն, սակայն միաժամանակ համակարգային առումով Ազգային ժողովը օրէնքով օժտուած այն կարեւորագոյն հարթակն է, որ ժողովրդի կամքն է ներկայացնում եւ որտեղ պէտք է տեղի ունենան մտքերի բախումներ՝ տարբեր տեսակէտների ազատ արտայայտման վայր հանդիսանալով բոլոր քաղաքական ուժերի եւ խմբաւորումների համար։ Այդ առումով, Ազգային ժողովն իր քաղաքական ներկայացուցչական դերը պէտք է բարձրացնի։ Ազգային ժողովի հարթակում է, որ պէտք է ստեղծուի քաղաքական մտքի բախման հնարաւորութիւնը եւ կայանայ պետական-քաղաքական որոշումների բերելուցման պրոցեսը։ Այս գործընթացից զերծ չպէտք է մնան նաեւ արտախորհրդարանական քաղաքական ուժերը, որոնց մէջ կան առողջ եւ գիտակից քաղաքական մօտեցումներ ունեցող գործիչներ։ Քանի որ պահի թելադրանքն է համախմբել քաղաքական բոլոր առողջ ուժերը՝ բոռուցբուելու համար որպէս իր ճակատագրի տէր վճռակամ արցախահասյութիւն։

Ազգային ժողովը մեր պետութիւնը ներկայացնող համապետական ընտրութիւնների միջոցով ձեւաւոր-

ւող երկու սիւներից մէկն է։ Նախագահական ինստիտուտը եւ Ազգային ժողովը այն երկու մարմիններն են, որոնք օրէնքի իրաւունքով լիազօրուած են խօսել ժողովրդի անունից։ Զարմանալի չեն ներքին եւ արտաքին ուժերի կողմից այն հարուածները, որոնց նպատակը պետական ամենակարեւոր այդ երկու ինստիտուտների քայքայումն է։ Դա առաւել նկատելի է դարձել 2020 թուականի 44-օրեայ պատերազմից յետոյ։ Հենց այս դիտանկիւնից պէտք է նայել թշնամի պետութեան՝ Ատրպէյճանի նախագահի յորջորջանքը այս երկու պետական հիմնասիւների կազմաքանդման ուղղութեամբ։ Զպէտք է անտեսել նաեւ ներքին տարրերի միջոցով Ազգային ժողովի դերի նուազեցմանը ու վարկաբեկմանն ուղղուած քայլերը։ Յանուն պետականութեան պահպանման պարտաւոր ենք տեղի չտալ եւ առաւել ամրապնդել սահմանադրական իրաւունքով օժտուած ժողովրդաընտիր այս պետական կառոյց։

Իւրաքանչիւր պետական կառույց մեզ համար անվտանգային համակարգի մի բաղադրիչ է։ Ազգային ժողովը այդ համակարգի հիմնական յենասիւններից մէկն է։ Մեր անվտանգային ներկայ համակարգը մեզանից պահանջում է նոր մօտեցումներ ու ռեսուրսներ։ ԱՀ եւ նրա ժողովրդի անվտանգային համակարգի հիմնական երաշխիք Բանակի պահպանումը, զարգացումն ու զօրացումը շատ դէպքերում կախուած է հենց այն օրէնսդրական դաշտից, որին միտուած է մեր գործունէութիւնը։ Ազգ-բանակ հայեցակարգի կենսունակութիւնը, կամայ թէ՛ ակամայ, պայմանաւորուած է ԱԺ-հասարակութիւն կապի եւ դրանից ծնունդ առած օրէնքների ընդունումով։

Սակայն հարցերի հարցը Արցախ-Հայաստան յարաբերութիւններն են, իսկ մեր պարագայում միջխորհրդարանական համադործակցութեան խնդիրը։ Իմ եւ յատկապէս մեր խմբակցութեան անունից բազմիցս հարց է բարձրացուել ՀՀ-ի հետ միջխորհրդարանական յարաբերութիւնների վերականգնման անհրաժեշտութեան մասին։ Համոզուած եմ, որ ըջջափակման պայմաններում ներկայ տեսիլիական միջոցների առկայութեամբ կարելի է լուծել նաեւ այս հարցը։ Զեր վստահութեան քուէն ստանալով, մենք այդ ուղղութեամբ պարտաւորուած ենք լինելու յստակ քայլեր անել։ Մեր քաղաքական կեցուածքը պէտք է ուղղուած լինի կամուրջներ կառուցելուն, խոսափելով ապակառուցողական դրսեւորումներից։

Շատերի մօտ ձեւաւորուել է կարծիք, որ ՀՀ-ն իր ձեռքերը լուացել է Արցախից։ Իշխող են դառնում այն տեսակէտները, թէ՛ մենք պէտք է այլ ուղիներ ու գործընկերներ փնտռենք։ Ուզում եմ այս պատասխանատու ամպիոնից վերահաստատել եւ վստահեցնել, որ մեր բոլոր ջանքերը ուղղուած են լինելու 1988-ին որդեգրած ազգային ազատագրական պայքարի առաջին իսկ օրե-

ազդու լիազօրութիւն, գործիքակազմ եւ քաղաքական հնարաւորութիւններ իր գործունէութիւնը արդիւնաւէտ կերպով կատարելու համար։

-Այս վճռորոշ օրերին ՀՅ Դաշնակցութեանը բաւականին ծանր ու պատասխանատու պաշտօն է վստահուել։ Որո՞նք են լինելու ՀՅԴ հետագայ քայլերը։

-*Արցախի ժողովուրդի անվտանգութիւնը, բարօրութիւնը եւ զարգացումը բացարձակ առաջնահերթութիւններ են Դաշնակցութեան համար եւ մենք երբեք չենք խուսափած պատասխանատուութեան մեր չափն ու կշիռը բարձրացնելու ի սպաս Արցախին, մանաւանդ օրհասական պահերուն։ Այդ համոզումով ենք գտնուած Արցախեան գոյամարտի ակունքներուն մէջ առաջին օրերէն իսկ՝ պատերազմի դաշտին մէջ, համաշխարհային զօրաշարժ իրագործող հայ դատի բանակով եւ Արցախի զարգացման աշխատանքներու նուիրումով։ Որովհետեւ Հ.Յ.Դ.-ի համար Արցախի հիմնահարցի կարգաւորումը ինքնորոշման իրաւունքի հիման վրայ, արցախահայութեան անվտանգութեան ապահովումը եւ ընկերա-տնտեսական ճգնաժամի վերացումը մեր համաշխարհային շարունակական աշխատանքի առանցքը կը կազմէին ցարդ եւ կը կազմեն այսօր։*

Համաձայն գտնուելով ընկեր Դաւիթ Իշխանեանի որպէս ԱՀ Ազգային ժողովի նախագահ առաջադրուելու առաջարկին, կ'ակնկալենք որ Արցախի քաղաքական բոլոր ուժերը կը համախմբուին խորհրդարանին շուրջ, լաւագոյնս արտայայտելով իր ճակատագրին տէր Արցախահայութեան վճռակամ կամքը։ Միաժամանակ խթան հանդիսանալով մեր աշխարհով մէկ տարուող պայքարին ի դէմ Ադրբեջանի եւ Թուրքիոյ հայատեաց եւ ցեղասպանական քաղաքականութեան։

Արցախը մինակ չի մարտնչիր, ան ունի ամբողջ հայութեան նեցուկը։ Մենք կը հաւատանք որ 2020ի պարտութիւնն ու այսօրուան ճգնաժամը ժամանակաւոր են եւ համազգային ճիգերով յաղթահարելու ենք ներքին թէ՛ արտաքին ամէն խոչընդոտ։

Կը շնորհաւորենք ընկեր Դաւիթ Իշխանեանին իր նոր ու պատասխանատու պաշտօնին ընտրուելուն առիթով եւ կը մաղթենք բեղուն գործունէութիւն եւ լիակատար յաջողութիւն։

«Ապառաժ»

րից ձեւաւորուած կարեւոր ռազմավարական նպատակի իրացմանը։ Մնացած բոլոր քայլերն ու ծրագրերը պէտք է դիտարկել մարտավարական քայլեր։

Հաւատացէք, քանի դեռ Արցախն ու արցախցին ոչ են ասում բոլոր այն առաջարկներին, որոնք հարուածում են մեր որդեգրած ռազմավարական նպատակին, արձանագրելի է հետեւեալը. ոչինչ չի աւարտուել։

Արցախեան պայքարը 30 տարի շարունակ եղել է այն առանցքը, որի շուրջ համախմբուել են համահայկական բոլոր ուժերը՝ անկախ քաղաքական հայեացքներից եւ անձնական նկատառումներից։ Մեր ներագրգային համերաշխութիւնը ձեւաւորուել է եռամիասնութեան սկզբունքի հիման վրայ։ Տաքնապալից այս օրերին անհրաժեշտութիւն է վերակազնել այդ եռամիասնութիւնը։ Համոզուած եմ, որ Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովը հնարաւորութիւն եւ ներուժ ունի այդ կարեւոր առաքելութեանը նոր շունչ ու եռանդ հաղորդելու։

Այս կարեւոր, հայրենանուէր պարտականութեան մէջ մեծ դեր է վերապահուած Հայ առաքելական եկեղեցուն։ Եկեղեցին մեր ժողովրդի ճգնաժամային օրերին միշտ կարողացել է ստանձնել ազգապահպան իր առաքելութիւնը։ Փոթորկալից օրերին եկեղեցին է եղել այն փրկօղակը, որին կառչելով կարողացել ենք յաղթահարել բազում մարտահրաւէրներ։ Ես վստահ եմ, որ ինչպէսեւ անցեալում, այօրուայ մեր մարտահրաւէրների յաղթահարման գործում ու ժողովրդին համախմբելու առաքելութեան մէջ պետութիւն-եկեղեցի համագործակցութիւնը եւ համախորհուրդ քայլերը կարեւորագոյն դեր կ'ունենան հոգեբանական այս իրավիճակից դուրս գալու համար։

Յարգելի՛ գործընկերներ

Անկախ Արցախի պետականութեան կերտման առաջին իսկ օրերից, շնորհիւ իմ կուսակցական ընկեր Արթուր Մկրտչեանի, հիմք է դրուել բարոյականութեան սկզբունքների վրայ հիմնուած քաղաքականութեամբ պետականութիւն կերտելուն։

ԱՀ նախագահի կողմից ԱԺ նախագահի պաշտօնը զբաղեցնելու առաջարկը եւ քաղաքական գործընկերների յորդորը ստանալուց յետոյ, առաջին հերթին հենց այդ մտատանջութեամբ եմ տառապել՝ արդեօ՞ք կը կարողանամ պահպանել Արթուր Մկրտչեանի սահմանած բարոյական արժէքների նշածողը։ Մի բան յստակ է՝ միայնակ դժուար է լինելու, միգուցէ անկարելի, իսկ միասին հնարաւոր։

Արցախի պետութիւնը կերտուել է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի արդիւնքում։ Այդ ուղղութեամբ վերջին 35 տարիներին մեր ժողովրդի զաւակները չեն խնայել ոչ մի բան։ Արիւնով,

ԱՐՅԱՆ... Ծար. էջ 8

Հայկական լոպպին Արեւմտեան աշխարհում. Միացեալ Նահանգներ

Սոյն յօդուածում նպատակ ունենք ընթերցողի դատին յանձնել մեր տեսակէտները Միացեալ Նահանգներում Հայկական էթնիկ լոպպինգի սկզբնաւորման, առաջին դրսեւորումների զարգացման փուլերի, քաղաքական առաջնահերթութիւնների, գործունէութեան ոլորտների եւ աշխատելու վերաբերեալ՝ ընթաց անդրադառնալով էթնիկ լոպպինգի ընկալման վերաբերեալ եւրոպական եւ ամերիկեան քաղաքական մշակոյթների տարբերութեանը: Ի հարկէ հաշուի առնելով այդ ամէնի ծաւալը, ցաւօք սրտի պէտք է իւրաքանչիւր դրուագի թուցցիկ անդրադարձ կատարենք եւ անդրադառնանք միայն խիստ կարեւոր իրադարձութիւններին, կազմակերպութիւններին եւ քաղաքական առաջնահերթութիւններին՝ նպատակ ունենալով ընթերցողին փոխանցել հիմնարար տեղեկութիւններ եւ խթանել նրա հետաքրքրութիւնը:

Ամերիկայում Հայկական հետքի վերաբերեալ առաջին վկայութիւնները հասնում են մինչեւ 17-րդ դարի առաջին կէս, սակայն հայ համայնքը որպէս այդպիսին, փուլ առ փուլ ձեւաւորուել է Արեւմտեան Հայաստանում հայութեան դէմ իրականացուած ցեղասպան գործողութիւնների արդիւնքում՝ սկսած 19-րդ դարավերջի համիտեան ջարդերից: Այդպիսով, առաջին աշխարհամարտի նախօրեակին արդէն Ամերիկայի Միացեալ Նահանգներում կար շուրջ 60.000-անոց հայ համայնք, ինչի թիւը չհշտակիրօք մեծացաւ Հայոց ցեղասպանութեան արդիւնքում ԱՄՆ գաղթած աւելի քան 20.000 հայութեան, սպա երկրորդ աշխարհամարտից ու դրանից յետոյ միջազգային միգրացիոն ակտիւացած շարժերի արդիւնքում ԱՄՆ-ում հաստատուած հայութեան շնորհիւ: ԱՄՆ-ում հայութեան հաստատման բոլորովին այլ գործընթաց սկսեց 1990-ականների կէսերից, որը տարբեր ինտենսիւտութեամբ շարունակուում է:

Արդիւնքում, Ամերիկայում ձեւաւորուել է հայկական կուռ եւ համեմատականօրէն կազմակերպուած սփիւռք, որի քաղաքական գործունէութեան հիմնական գործառնողի՝ Հայ դատի Ամերիկայի յանձնախմբի գործունէութեանը կ'անդրադառնանք սոյն յօդուածում:

Առհասարակ, Ամերիկայի Միացեալ Նահանգներում, ի տարբերութիւն եւրոպական երկրների, լոպպինգը քաղաքական մշակոյթի ուրոյն մաս է եւ քաղաքական գործընթացում ընդունուած երեւոյթ: Եւրոպայում բոլորովին այլ իրականութիւն է, երբ լոպպիստական գործունէութիւնը կապուում է ստուերային գործարքների, կոռուպցիայի, ազդեցութեան չարաշահման եւ բացասական այլ երեւոյթների հետ, ինչն ի հարկէ որոշակիօրէն դժուարեցնում է Եւրոպայում էթնիկ լոպպիստական կառոյցների գործունէութիւնը: Պատահական չէ, որ օրինակ Եւրոպայում լոպպիստական կառոյցները, իրենց գործունէութիւնը բնորոշելու համար առաւել յաճախ օգտագործում են “advocacy” եզրոյթը, քան “lobby”-ն: Ամերիկայում լոպպինգի գործընթացի համար օրէնսդրականական ապահովման հիմքերը գալիս են դեռեւս 18-րդ դարավերջից, Ամերիկեան Սահմանադրութեան առաջին լրացումից, որով նախատեսուած՝ քաղաքացիների բողոքներ ներկայացնելու եւ յարակից այլ իրաւունքները հող նախապատրաստեցին Ամերիկայում լոպպիստական գործունէութեան սկզբնաւորման համար: Աւելին, ինչպէս մեր նախորդ յօդուածում քննարկեցինք, հենց լոպպինգ բառն ինքնին ամերիկեան քաղաքական միջավայրի ծնունդ է: լոպպինգի վերաբերեալ ամերիկեան օրէնսդրութիւնը պատմութեան ընթացքում շարունակապէս կատարելագործուել է՝ յատուկ ուշադրութիւն դարձնելով լոպպիստական խմբերի գործունէութեան կանոնակարգմանը, վերահսկողութեանը եւ հաշուեւորողականութեան ապահովմանը: Յատկապէս յիշատակման են արժանի նախ 1876թ. օրէնքը, որը ենթադրում էր Կոնգրեսում լոպպիստական գործունէութեամբ զբաղուողների գրանցում, ապա 1938թ. ընդունուած «Օտարերկրեայ գործակալների գրանցման մասին» (Foreign Agents Registration Act — FARA) օրէնքը, 1946թ. ընդունուած լոպպիստական գործունէութեան կարգաւորման մասին (Federal Regulation of Lobbying Act — FRLA) օրէնքը: լոպպիստական խմբերի գործունէութեան կարգաւորմանը վերաբերող բազմամակարդակ օրէնսդրական ակտեր ընդունուել են նաեւ բոլորովին վերջերս. ինչպէս ասացինք՝ դա շարունակական գործընթաց է:

Ամենեւին պատահական չէ, որ հենց Ամերիկայի Միացեալ Նահանգները դարձաւ Հայ դատի շարժման սկզբնաւորման օճախը՝ ինչը պայմանաւորուած էր նաեւ 20-րդ դարի կէսերին միջազգային յարաբերութիւնների տրամաբանութեամբ, Ամերիկայի հայկական սփիւռքի բնոյթով ու կարողականութեամբ, ինչպէս

նաեւ միջազգային քաղաքական գործընթացներում Ամերիկայի Միացեալ Նահանգների ժամանակի դերակատարութեամբ:

Հաշուի առնելով հայկական հարցը միջազգային քաղաքական օրակարգում վերակենդանացնելու եւ դրա լուծման հնարաւորութիւնները, ինչը պայմանաւորուած էր Երկրորդ աշխարհամարտի արդիւնքում միջազգային յարաբերութիւնների բնոյթով՝ մասնաւորապէս աշխարհի քաղաքական քարտէզի վերածելութեամբ եւ պատերազմի ընթացքում Թուրքիայի կրաւորական կեցուածքի համար վերջինիս պատասխանատուութեան ենթարկելու հաւանականութեամբ՝ ՀՅ Դաշնակցութիւնը 1944թ-ից սկսեց Հայ դատի հիմնադրութեան գործը:

Ամերիկայում Հայ դատի հիմնադրութեան պատմութիւնը կարօտ է մասնագիտական խորն ուսումնասիրութիւնների՝ արխիւագիտական նիւթի եւ ժամանակի միջազգային յարաբերութիւնների խորքային գործընթացների համադրութեամբ, ինչին Հայ դատի կենտրոնական գրասենեակին արդէն իսկ ձեռնուղի է եղել:

Ամէն դէպքում Պոսթոնում, Միմոն Վրացեանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Հայրենիք տարեգիրք-տօնացոյց»-ի 1947թ. համարում գետեղուած է մի հետաքրքիր յօդուած՝ Հայ դատի հիմնադրութեան վերաբերեալ: Այն ներկայացնում է ժամանակի ազգային-քաղաքական առաջադրանքներն ու Հայ դատի հիմնադրութեան եւ հետագայ գործունէութեան նպատակները: Բանը նրանում է, որ Երկրորդ աշխարհամարտի տարիներին եւ դրանից յետոյ էլ հայ հանրոյթի մօտ քաղաքականապէս դեռեւս բիւրեղացած չէր հայ ժողովրդի անժամանցելի իրաւունքների պաշտպանութեան խնդիրը, ինչի արդիւնքում առաջ էին եկել երկու իրարամերձ քաղաքական ուղղութիւններ՝ առաջինը յանգում էր նրան, որ արտասահմանի հայութիւնը անկիւք չունի հայ ժողովրդի իրաւունքների միջազգային պաշտպանութեան գործում եւ դրա իրականացումը կը նշանակի ուղղակի միջամտութիւն Խորհրդային Հայաստանի գործերին: Այս ուղղութեան հետեւորդները նոյնիսկ մերժում էին առհասարակ Հայկական հարցի գոյութիւնը: Սփիւռքի հայութեան միւս թիւը այն դիրքորոշման էր, որ պատերազմի աւարտը, Միաւորուած ազգերի կազմակերպութեան ստեղծումն ու աշխարհի քաղաքական վերաբաժանումն ու նոր սահմանադատումները պատեհ առիթ են վերստին արծարծելու Հայկական հարցը:

Այս ամէնի ետնապատկերի վրայ ՀՅ Դաշնակցութիւնը ձեռնարկեց Հայ դատի հիմնադրութեան գործը: Հայ դատի յանձնախումբն իր գործունէութիւնը սկսեց 1944թ. Դեկտեմբերին, 1945 թ. գրասենեակ ունեցաւ Նիւ Եորքում, հայերէն՝ «Հայ դատի յանձնախումբ», անգլերէն՝ “Armenian National Committee” անունով: Ի սկզբանէ Հայ դատը ընդհանրական առումով ձեւակերպուեց որպէս «Թրքահայ հողերի կցում Հայաստանի Հանրապետութեանը եւ տարագիր հայութեան վերադարձ հայրենիք»: Դաշնակցութեան կողմից ձեռնարկուած՝ Հայ դատի պաշտպանութեան ֆոնդի հանգանակութեան ընթացքում ժողովրդական մեծ խանդավառութեամբ գոյացաւ 165 000 ԱՄՆ տոյար: Հայ դատի յանձնախմբի առաջին գրասենեակը տեղակայուած էր Նիւ Եորքում: Իր առաջին իսկ նիստում Հայ դատի յանձնախումբը որոշակիացրեց իր գործունէութեան հիմնական ուղղութիւնները եւ քաղաքական հաստատումները՝ մասնաւորապէս.

Հայ դատ ասելով յանձնախումբը հասկանում է նախագահ Ուիլսոնի սահմանագծած հայկական հողերի կցումը Խորհրդային Հայաստանին եւ տարագիր հայութեան վերաբնակումը հայկական հողերում

Օգտակար եւ բաղձալի նկատել ազգային բոլոր ուժերի գործակցութիւնը Հայ դատի հետապնդման շուրջ

Եթէ խորհրդային Հայաստանի իշխանութիւնն ինքն ստանձնի Հայ դատի հետապնդումը, Հայ դատի յանձնախումբի գործը պէտք է լինի աջակցել դրան

Հայ դատի յանձնախումբը պէտք է Հայ դատը ներկայացնի ԱՄՆ կառավարութեանը եւ հասարակութեանը, ինչպէս նաեւ միջազգային յարաբերութիւններում՝ պետութիւններին, քաղաքական ուժերին ու կազմակերպութիւններին, որոնք կարող են դերակատարում ունենալ Հայ դատի լուծման գործում:

Իր նպատակներին հասնելու համար Հայ դատի յանձնախումբը դիմումներ է ներկայացնում ԱՄՆ կառավարութեանը, միջազգային խորհրդաժողովներին, նիւթեր է հրատարակում Հայ դատի վերաբերեալ, տպագիր մամուլով եւ ռադիոյով արծարծում է Հայ դատի խնդիրները:

Հայ դատի յանձնախումբի առաջին գործողութիւնը

եղաւ յիշեցնել պետութիւնների դեկավարներին Հայ դատի գոյութեան եւ դրա լուծման անհրաժեշտութեան վերաբերեալ: Այդ նպատակով 1944թ. դարնանը յարաբերական բնոյթի աշխատանքներ են իրականացուել ամերիկեան, անգլիական եւ խորհրդային կառավարութիւնների ներկայացուցիչների հետ, ներկայացուել են Հայ դատի հետապնդած նպատակներն ու դրանց պատմաքաղաքական հիմնաւորութիւնը:

Հայ դատի նորակազմ յանձնախմբի երկրորդ կարեւոր քայլը Միացեալ Ազգերի Կազմակերպութեան՝ Սան Ֆրանսիսկոյի խորհրդաժողովին պատուիրակութիւն գործուղելն էր: Վերջինս խորհրդաժողովի ներկայացուցիչներին է ներկայացրել հանգամանօրէն պատրաստուած եւ հիմնաւորուած թղթածրար՝ հայկական պահանջների վերաբերեալ, ինչը լայնօրէն լուսաբանուել է ժամանակի ամերիկեան մամուլում: Հայ դատի յանձնախումբը հիմնադրուածից անմիջապէս յետոյ ակտիւօրէն օգտագործել է մամուլի հնարաւորութիւնները՝ հանրային կարծիքի վրայ ազդելու եւ համակիր շրջանակներն ընդլայնելու ուղղութեամբ, եւ պատահական չէ, որ Սան Ֆրանսիսկոյի խորհրդաժողովի օրերին Հայ դատի յանձնախումբը հանդէս էր գալիս տեղական ռադիոյի եթերում: Այդ կարճ ժամանակահատուածում բիւրեղացած մտքերն ու քաղաքական առաջնահերթութիւնները հետագայում որդեգրուեցին հայկական սփիւռքի այլ գաղթօճախների կողմից: Արդէն 1960-ական թթ. Հայոց Ցեղասպանութեան յիսունամեակի առիթով սփիւռքի բոլոր համայնքներում Դաշնակցութիւնը կազմեց յատուկ յանձնախմբեր, որոնք էլ այնուհետեւ կոչուեցին ՀՅԴ Հայ Դատի յանձնախմբեր եւ առայսօր գործում են աշխարհի առաւել քան երեսուն երկրներում:

Միջանկեալ նկատենք, որ Հայ դատի Ամերիկայի յանձնախմբի ակունքներն աւելի վաղ ժամանակներից են գալիս: Առաջին աշխարհամարտի աւարտին Ամերիկայի Միացեալ Նահանգներում կազմուած «Հայաստանի անկախութեան ամերիկեան կոմիտէն», իսկ Հայաստանի խորհրդայնացումից յետոյ՝ նաեւ «Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը» եղել են այն կառոյցները, որոնց միջոցով Հայ Ցեղափոխական Դաշնակցութիւնը միջազգային մակարդակով վարում էր քաղաքական, յարաբերական եւ քարոզչական աշխատանքներ՝ յանուն հայ ժողովրդի իրաւունքների միջազգային ճանաչման եւ Հայաստանի անկախութեան:

Անդրադառնալով Հայ դատի Ամերիկայի յանձնախմբին, նշենք, որ այն հայկական ամենախոշոր եւ ամենաազդեցիկ համայնքային կազմակերպութիւնն է Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Հայ դատի Ամերիկայի յանձնախումբն ակտիւօրէն առաջ է մղում ամերիկահայութեան մտահոգութիւններն ու քաղաքական պահանջները՝ այդ գործում համագործակցելով ինչպէս համայնքային, այնպէս էլ այլ ժողովուրդների համայնքային կազմակերպութիւնների հետ:

Հայ դատի Ամերիկայի յանձնախմբի կենտրոնական գրասենեակը տեղակայուած է Ուաշինկթոնում եւ գործում է Armenian National Committee of America անունով: Հայ դատի ներկայ գրասենեակը հաստատուել է 1984թ.: Յատկանշական է, որ 1944թ., որը սկսում էր Հայ դատի գործը, յանձնախմբի համար ընտրուեց “Armenian National Committee” անուանումը, որը սակայն 1950-ականների սկզբին փոխուեց եւ յանձնախմբի համար վերցուեց դարասկզբին գործող “The American Committee for the Independence of Armenia” (Հայաստանի անկախութեան ամերիկեան կոմիտէ) կազմակերպութեան անուանումը:

Հայ դատի Ամերիկայի յանձնախմբի հիմնական նպատակներն են.

Ի նպատտ ազատ, անկախ եւ Միացեալ Հայաստանի՝ խթանել հասարակական իրազեկուածութիւնը,

Ամերիկահայ համայնքի հետաքրքրութիւնների շրջանակում ազդել եւ ուղղորդել ամերիկեան քաղաքականութիւնը,

ԼՈՊՊԻ... Ծար. էջ 5

Գէորգ Ղուկասեան

ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի Կեդրոնական գրասենեակի յատուկ ծրագիրներու պատասխանատու

Քաղաքագիտութեան և միջազգային յարաբերութիւններու փորձագէտ

Այնճարի մէջ գետեղուեցաւ Սարգիս Զէյթլեանի կիսանդրին

Իր կիսանդրիի գետեղումով, Մուսա Լեւոնի ինքնապատճառով Պէկ գիւղը ծնած Սարգիս Զէյթլեանի արձագանքը իր կիսանդրիի յանդիմանումը արդարօրէն կը նուիրագործուի Այնճարի իր համազօրեղացիներուն կողմէ:

Կիսանդրին ինքնին ստեղծագործութիւնն է Մուսա Լեւոնի յայտնի ընտանիքներէն արուեստագէտ Յակոբ Ճանապարհանի:

Սարգիս Զէյթլեանի կիսանդրիի տեղադրումը կարեւոր եւ պատմական քայլ մըն է Այնճարի կողմէ անմահացնելու իր արժանաւոր զաւակին, ազգային ազատագրումի եւ Հայկական Արեւելումի Սարգիս Զէյթլեանի գաղափարներու հնչեղութիւնը եւ արմատացնելու իր գաղափարները Այնճարի յաջորդ սերունդներուն մտքերուն մէջ:

Այսօր, Այնճարի Կարմիր Լեռ Կոմիտէին կազմակերպած այս ձեռնարկով եւ այս կիսանդրիի գետեղմամբ, Սարգիս Զէյթլեանի մշտական ներկայութիւնը կը դառնայ Այնճարի մէջ, որ իր կեանքի երկայնքին միշտ ալ եղաւ իր համար ամէնէն հոգեհարազատ միջավայրը, հոն ուր կը փափաքէր վերադառնալ միշտ:

Սարգիս Զէյթլեան իր նկարագրով եղաւ Մուսա Լեւոնի եւ Այնճարցի լեռնական հայու տիպարի խտացումը: Պայծառամտութիւն, ուսանելու եւ ուսուցանելու մարմաջ, անշեղ վճռակամութիւն, յանդգնութիւն, արդար պայքարի մէջ անզիջողութիւն եւ Հայ ժողովուրդի եւ մեր ազգային պատմական առաքելութեան արժանաւորապէս ծառայելու յանձնառութիւնը եղան հիմնական բաղկացուցիչները իր երկաթեայ նկարագրին եւ իր ազգանունը կեանքի երթին:

Իր կեանքի բոլոր հանգրուաններուն՝ երեսուցէ-մէջ Պէյրութ, Գահիրէն Այնճար եւ դարձեալ Պէյրութ, կամ Սփիւռքի գանազան ոստաններուն մէջ, Սարգիս Զէյթլեանի դաւանանքը եղաւ Հայաստանն ու հայութիւնը ամէն բանէ վեր դասել: Իր ուսանողական շրջանէն մինչեւ կրթական հրապարակագրական եւ քաղաքական-կազմակերպչական նուաճումները, Սարգիս Զէյթլեանի վերափոխիչ ներդրումն ունեցաւ Հայ ազգային գաղափարաբանութեան եւ Հայ Դատի ռազմավարութեան մշակումին մէջ:

Իր գործած բոլոր գաղութներուն մէջ, վճռական ղեկավարութիւնը ցուցաբերեց եւ Հայ երիտասարդութիւնը համախմբեց յանուն ազգային կեանքի կազմակերպման եւ հայութեան վերելքին:

Դեռեւս իր ձեռնարանի տարիներուն, պէյրութաբնակ Մուսա Լեւոնիներու Ուսումնասիրաց Միութիւնը հիմնեց:

Եզիպտոսի մէջ իր պաշտօնավարած ազգային վարժարանին կրթական մակարդակը բարձրացնելու եւ արդիական պահանջներու հետ ներդաշնակելու նպատակով, ուսուցչական շարժում ստեղծեց: Իսկ երբ Դաշնակցութեան օրդան Յուսէպի խմբագրութեան միացաւ, թէ՛ աշխատակիցներու լայն շրջանակ կազմեց, թէ՛ միջկուսակցական պայքարը գաղափարական եւ սկզբունքային բարձրութեան վրայ պահեց:

Այնճարի տնօրէնութեան շրջանին, Յառա՛-Գալուստ Կիւլպէնկեան Վարժարանը քոլէճի մակարդակին բարձրացուց եւ Լիբանանի մէջ առաջին անգամ ըլլալով, առանձին շէնքով երկրորդական վարժարան հիմնեց յանուն ազգային կեանքի կազմակերպման եւ հայաշունչ սերունդներու դաստիարակութեան: Աւելին, քոլէճին կրթական ծրագիրը վերամշակեց եւ առաջին անգամ ըլլալով, Հայ Դատի դասընթացը հաստատեց: Իսկ



քոլէճին շարունակական վերելքին համար, Շրջանաւարտից Միութիւնը կազմեց: Միաժամանակ, իբրեւ Այնճարի Կարմիր Լեռ Կոմիտէի հերթապահ, կալուածագրութեան վերաքննութիւն կատարեց եւ գոյութիւն ունեցող բազմաթիւ վէճեր հարթեց: Ան գարկ տուաւ գիւղի տնտեսութեան կաթնատնտեսութիւնը կազմակերպելով եւ համագործարանի մը նախաձեռնելով, Այնճարի միաժամանակ գիւղի ապահովութիւնը կազմակերպեց: Աւելին, Այնճարի մէջ մշակութային փառատօնի աւանդութեան հիմը դրաւ:

Միշտ իրա՛ւ ղեկավարի յատկանիշներ ցուցաբերելով, Սարգիս Զէյթլեան երիտասարդութիւնը համախմբեց եւ ազգային վերափոխիչ ներկայութիւն եղաւ Պէյրութի Ազգակ օրթթերթի հայկական բաժնին համար: Իսկ Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի իր հերթապահութեան շրջանին, իր ղեկավարութեամբ Լիբանանի խորհրդարանական պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով հայութեան երեսփոխաններուն թիւը հինգի բարձրացուց եւ երկու նախարարական պաշտօններ ապահովեց: Աւելին, դարձեալ առաջին անգամ ըլլալով, երեսփոխանական Գրասենեակ հաստատեց, մեծապէս աւելցնելով հայութեան քաղաքական կշիռը:

Միւս կողմէ, ազգային կազմակերպական նշանակութիւն ունեցող հիմնարկներ հաստատեց, ինչպէս Լիբանանի երիտասարդաց Միութիւնը, Զաւարեան Ուսանողական Միութիւնը, հայ մամուլի աշխատակիցներու Մամուլ Դիւանը: Աւելին, անզիջող պայքար մղեց կաշառակերութեան եւ կարգապահական խախտումներու դէմ:

Կեդրոնական Կոմիտէի իր հերթապահութեան տարիներուն հզօրացաւ ապահովական համակարգը որուն հիման վրայ Լիբանանահայութիւնը կրցաւ դիմակայել Լիբանանի քաղաքացիական պատերազմը աւելի ուշ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին կեդրոնական ղեկավար դեր ունեցաւ Հայու-

թեան դրական չէզոքութեան մարտավարութեան հաստատման մէջ, եւ երբ Հայկական թաղամասերը սպառնալիքի ենթարկուեցան անոնց ուժական պաշտպանութեան մէջ:

1972-էն սկսեալ, իբրեւ Դաշնակցութեան Բիւրոյի անդամ, ան եղաւ տիրական ներկայութիւն իբրեւ ազգային ղեկավար: Թէ՛ Բիւրոյի օրդան Ազգակ Շաբաթօրեակ Դրօշակի խմբագրութիւնը վարեց, թէ՛ Դաշնակցական մամուլի պատասխանատուութիւնը ստանձնեց եւ թէ՛ Դաշնակցութեան ծրագիր-կանոնագրի վերամշակումը իրագործեց: Աւելին, տարբեր գաղութներ այցելելով, հզօրացուց Դաշնակցութեան կազմակերպութիւնը եւ ընդհանրապէս Հայութեան ինքնակազմակերպումը ու մանաւանդ քաղաքներէ հանրանուէր սերունդներու պատրաստութիւնը:

Եթեանասունական եւ ութսունական թուականներուն, իր սերունդի ղեկավարութեամբ նոր թափ առած Հայ Դատի պահանջատիրութեան պայքարին մէջ ան եղաւ մեր երիտասարդութեան քաղաքականացման եւ յեղափոխականացման գաղափարաբանական դրօշակիւրը եւ Հայ Դատի լուծման համար անշեղ մարտունակութեան գաղափարախօսը:

Իր կեանքի բոլոր հանգրուաններուն, Սարգիս Զէյթլեանի վերափոխիչ գործունէութիւնը եւ վճռական ղեկավարութիւնը յարգանք պարտադրեց ոչ միայն սփիւռքեան գաղափարական բոլոր շրջանակներուն, այլեւ իր ժամանակակից հայրենի ազատատենչ երիտասարդութեան:

Թող Այնճարի հայաշունչ մթնոլորտին մէջ Սարգիս Զէյթլեանի կիսանդրիին գետեղումը ներշնչումի աղբիւր դառնայ ազգային իտէլալի տէր, հայօրէն ապրելու եւ հայօրէն պայքարելու ընդունակ սերունդներուն համար:

ՀՐԱԶԴԱՆ ԿԱԼԵԱՆ

ԼՈՊՊԻ... Սկիզբը էջ 4

Հանրային քաղաքականութեան վերաբերեալ ներկայացնել Ամերիկայի հայ համայնքի հաւաքական տեսակէտը, միաժամանակ կապ հանդիսանալ համայնքի եւ վերջինիս կողմից ընտրուած պաշտօնեաների միջեւ,

Հայ դատի Ամերիկայի յանձնախումբը ակտիւութիւն է դրսեւորում նաեւ մի շարք այլ բնագաւառներում՝ ներգրաւուած լինելով քաղաքական եւ կրթական գործունէութեան բազմաթիւ ոլորտներում, ներառեալ.

Ամերիկահայ համայնքին յուզող հարցերի վերաբերեալ օրէնսդրական գործընթացների նախաձեռնում, որոնք նպաստում են Հայաստանի, որպէս անվտանգ, բարեկեցիկ եւ ժողովրդավարական պետութեան ամրապնդմանը,

Օժանդակութիւն Լեւոնային Ղարաբաղի ազատ ինքնորոշմանն ու ապահով սահմաններով անկախութեանը,

Հայաստանում ամերիկեան օժանդակութեան մակարդակի բարձրացում՝ խթանելու համար Հայաստանի տնտեսական եւ ժողովրդավարական զարգացումը,

Լեւոնային Ղարաբաղին ամերիկեան ուղղակի

աջակցութեան ապահովում,

Հայոց ցեղասպանութեան պատշաճ ոգեկոչում եւ ցեղասպանութեան հետեւանքների վերացմանը նպաստում,

Թուրքիայի եւ Ատրպէյճանի կողմից Հայաստանի շրջափակման վերացման շուրջ աշխատանքներ:

Յանձնախումբը մասնակցում է համապետական, նահանգային եւ տարածքային մակարդակներում ամերիկեան ընտրութիւններին՝ հայ-ամերիկեան յարաբերութիւնների վերաբերեալ լաւատեղեակ պաշտօնեաների միջոցով հայութեանը ներկայացնելով թեկնածուների դիրքորոշումները հայկական խնդիրների վերաբերեալ: Հայ դատի Ամերիկայի յանձնախումբը ընտրական գործիքների կիրառմամբ նաեւ հանրային օժանդակութիւն է տրամադրում ընտրապայքարի ելած թեկնածուներին... (1):

Հայ դատի Ամերիկայի յանձնախումբը յատուկ ուշադրութիւն է դարձնում հայ համայնքի հետ օրկանական կապի ու փոխգործակցութեան ապահովմանը, ինչի համար Հայ դատի Ամերիկայի յանձնախումբն օգտագործում է համացանցային մի շարք գործիքներ՝

փոստային դասիչի միջոցով օրէնսդիրներին գտնելու եւ նրանց նամակներ գրելու հնարաւորութիւն, օնլայն հանգանակութիւնների ապահովում եւ քաղաքներում, բաժանորդագրում Հայ դատի Ամերիկայի յանձնախումբի էլեկտրոնային նամակագրութեան համակարգին, կամաւորագրում Հայ դատի աշխատանքներին, նուիրատուների հետ ինչպէս առցանց, այնպէս էլ ֆիզիքական նամակագրութեան եւ հաշուետուողականութեան ապահովում: Այս գործողութիւնները լոպպիստական կազմակերպութեանը թոյլ են տալիս հանդէս գալ իբրեւ համայնքային լոպպիստական կազմակերպութիւն, ընդունող երկրի իշխանութիւններին առաւել հիմնաւոր ներկայացնել սեփական քաղաքական դիրքորոշումները, քաղաքականապէս ուղղորդել համայնքը, ինչպէս նաեւ օգտուել վերջիններիս հնարաւորութիւններին:

(1) գրասենեակներ — Armenian National Committee — International Հայ Դատի Կենտրոնական Խորհուրդ (ancnews.info)

Ցեղասպանության Եւ Երրորդ Պատերազմի Սպառնալիք

Երէկ, հակառակ անոր որ Ֆրանսայի լրատուամիջոցները գերյագեցած էին երկրի նոր կառավարութեան կազմութեան վերաբերող լուրերով եւ մեկնաբանութիւններով, հեռատեսիլը, պատկերներու տակ սփռուող իր գրաւոր լուրերուն մէջ, քանի մը տողով արձագանգեց Հայաստանի վարչապետի յայտարարութեան, որ՝ «Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը կը գտնուի ցեղասպանութեան ենթարկուելու սպառնալիքի տակ եւ կրնայ շղթայագերծուել Հայաստան-Ազրայէյճան երրորդ պատերազմ մը»։ Այսօր լրատուութիւնը կրկնուեցաւ։

Ո՛չ Ֆրանսան, ո՛չ Ռուսիան, ո՛չ Միացեալ Նահանգները եւ ո՛չ Եւրոմիութիւնը Հայաստանի վարչապետին ահազանքը կը սպասէին գիտնալու եւ հասկնալու համար։ Ի՞նչ բանի ծառայեցին Հայաստան եկող եւ Հայաստանէն դուրս գացող պատուիրակութիւնները, անոնց վարած անհատնում օրերու եւ ժամերու բանակցութիւնները։ Զանոնք հովանաւորած եւ հիւրընկալած պետութիւնները ինչո՞ւ չեն խոստովանիր իրենց անկարողութիւնը եւ անսկզբունքայնութիւնը՝ կասեցնելու բիրտ ուժի քաղաքականութիւնը եւ անարդարութիւնը։ Մի՞թէ այլազան շահախնդրութիւններով, յաճախ՝ նախաձեռն, անոնք մեղաւորեցին չեն ոճրային սպառնալիքներուն, երբ Արցախի վերջին բեկորը եւ անոր 120.000 բնակիչները ենթակայ են շրջափակման։ Մեծատիրոջ քաղաքագէտները չեն հասկնար, թէ ո՛ր կրնայ հասցնել շրջափակման հետեւանքները։ Անոնք յետո՞յ միայն գուժի առեւտուր պիտի ընեն՝ հաց եւ դեղ զրկելով, որբահաւաքով։ Աւանդութիւն է։

Բանակցութիւններու ընթացքին այս «պատմական ճշմարտութիւն»-ը համարձակութեամբ ըսող եղա՞ւ։ Ըսին՝ «շրջափակման հարիւրերորդ օր», հիմա կ'աճին այդ օրերը, ո՞ր հասցնելու համար իր հողերուն վրայ եւ ապրիլ ուզող ժողովուրդը մը։ Իսկ հայկական պետութիւնը, պարտութիւններ գումարելէ ետք, անզօրութեամբ «սիրողական» (amateur) քաղաքականութիւն կը խաղայ, մեծեր ու պզտիկներ օգնաւ կը բարձրանան, օգնաւէն կ'իջնեն, կ'ըսեն, որ կը բանակցին, լսող չունենալով հանդերձ, յայտարարութիւններ կ'ընեն։

Յետո՞յ։ Ի՞նչ կը բանին բանակցողները, որոնք կարծէք փակ դռներու առջեւ կամ ետին կը փսփսան քաղաքակիրթ աշխարհի սովորական որձեւէ՞գ ճապկումներով։ Հայաստան ըսող եղա՞ւ եւ լսող չեղաւ, որ բանակցութիւններու ամուլութիւնը պիտի թեկադրէր այն ողջախոհական իմաստութիւնը, որ բանակցողները փոխուէին, եւ ճակատագրապաշտի պէս չսպասէինք, որ օրերը գումարուէին իրարու վրայ։

Միջոցին, Հայաստանի վարչապետի յայտարարութեամբ իսկ, կը սպասուի «երրորդ պատերազմը»։ Իսկ ինչպէ՞ս պատերազմի վտանգ դիմակայելու կը պատրաստուին հանրապետութիւնը եւ արտագաղթողներով գերաճող սփիւռքները, որոնք վաղուց հասկցած պէտք էր ըլլային, որ ցոյցեր եւ «հայրենասիրական տուրիզմ» բաւարար չեն վարչապետին ըսած «ցեղասպանութեան» եւ «երրորդ պատերազմի վտանգ» դիմակայելու։ Գումարեցէ՛ք նաեւ ոստիկանական մեծաթիւ ջոկատները, որոնք սահմանապահ բանակ չեն։ Ահազանգող վարչապետը պիտի ըսէ՞, թէ նախատեսելով վտան-

գը՝ ինչպէ՞ս պատրաստած է երկիրը եւ ժողովուրդը։ Վտանգի առկայութեան խոստովանութիւն-զգուշացումը պետութիւն առաջնորդելու ճախողութիւն է, որ բնական կերպով պէտք է յանգած ըլլար իշխանափոխութեան։

Ո՛չ միայն բանակցող պէտք է փոխել, այլ նաեւ՝ կազմակերպել բանակցողի թիկունքը։ Այդ թիկունքը իր դերին գիտակցող, պատմութեան պատգամը լսող եւ մանաւանդ հաւաքաբար ուժաւոր ժողովուրդն է։ Եթէ մենք կը տեսնենք եւ գիտենք, որ հայերը կ'արտագաղթեն, հայերը չեն վերադառնար իրենց հայրենիքը, հայրենատիրութիւն չեն ընենք, սպառնացողն ալ կը հասկնայ, եւ ի հարկէ կը տկարանայ թիկունք չունեցող հայ բանակցողին դիրքը։ Այլ խօսքով, հայկական քաղաքական եւ իմացական համագաղթին ղեկավարութիւն մը անհրաժեշտ է յառաջացնել, որ խօսի աշխարհին, բանակցութիւններու պատրաստութեան ենթահող պատրաստելու համար եւ քաղաքականութիւնը հիմնաւորել իրաւունք ճշդող պատմութեամբ։ Բանակցող հայկական պատուիրակութիւններուն կ'ընկերացնենք պատմաբաններ։ Ո՛չ միայն բանակցող պէտք է փոխել, այլեւ բանակցութիւններուն պէտք է տալ ազգային եւ պատմական ճշմարտութեան որակ եւ այդպէս խօսիլ։

Բանակցողները պէտք է ըսեն, մեր ժողովուրդն ալ, ներսի եւ դուրսի, առանց սեթեւեթի, պէտք է ըսէ, որ շրջափակումը պատերազմական գործողութիւն է։ Ֆրանսայի նախագահը եւ արտաքին գործոց նախարարը, քաղաքական այլ գործիչներ եւ մտաւորականներ չեն կրնար չիմանալ այս պարզ ճշմարտութիւնը, ինչպէս նաեւ՝ բանակցութիւններ հիւրընկալող Եւրոմիութեան պատասխանատուները, Ֆրանսան, Միացեալ Նահանգները եւ միւսները։

Հայաստանի վարչապետին ահազանքը նախ մենք պէտք է լսենք, հայերը պէտք է լսեն, բոլորը, ուր որ են եւ խօսին ու գործեն՝ առանց ճապկումներու, խօսին՝ որպէս անմիջականօրէն եւ հաւաքաբար վտանգի ենթակայ հաւաքականութիւն եւ ըստ այնմ գործեն։ Եթէ շարունակուի Արցախի վերջին բեկորի շրջափակումը, անոր՝ որպէս հայու հայրենիք, վերականգնումը անկարելի կը դառնայ։ Եթէ Արցախը մեր ապրկարութեամբ կամ միջազգային նենգութեամբ դադրի հայու հայրենիք ըլլալէ, ոչ մէկ երաշխիք կրնանք ունենալ, որ քանի մը տասնեակ տարի ետք, դաւադրութիւնը շարունակուելով, հանրապետութիւնն ալ դառնայ Արեւմտեան Ազրայէյճան։

Այս ճշմարտութիւնը այսօր պէտք է տեսնել եւ ըստ այնմ գործել։ Ապա թէ ոչ կը ժառանգենք աւաղելու եւ նորոգուած ազգային ցաւեր երգելու, արուեստով կամ ոչ, յուզուելու եւ պոռալու, դատարկ իրաւունքը, այնպէս, ինչպէս հայ հայրենասէր զբօսաշրջիկին պէս, որ կը նստի Անիի պարիսպներուն տակ եւ կը լուսանկարէ մորմոք յաւերժացնելու համար, որ մենաւորի կոտորածով ցաւի հաճոյք է։

Հայաստանի վարչապետը ահազանգած է, որ Արցախի վերջին բեկորի հայերուն ցեղասպանութիւն կը սպառնայ, որ՝ երրորդ պատերազմ մը կրնայ տեղի ունենալ։ Այս երկուքին հետեւանքները գիտենք։ Պառակտում մշակողները թող «քաղաքական իմաստութեամբ» խօսին պառակտումներու հետեւանքներուն մասին։

Թերեւս բանակցող պէտք է փոխել։ Բայց հրամայականօրէն ներսը եւ դուրսը պէտք է փնտռել հայրենատէր զանգուած, որ չգոհանայ կարծիքներ որոճալով, ինչ որ ղեկավարումի բացակայութեան խոստովանութիւն է, յանգած՝ այսօրուան պարտութեան։

Հայ քաղաքական միտքը դեռ կրնա՞յ վերականգնում իրականացնել՝ ինքզինք եւ առաջնորդութեան բեմահարթակ վերանորոգելով, մերժելով ճախողութիւնը եւ պարտութիւնը՝ որպէս քաղաքական եւ ղեկավարման կանոն։ Ի հարկէ՞ միշտ ներսը եւ դուրսը։ Այս պիտի կարենա՞յ ընել ազգը։ Այդ կ'ըլլայ՝ վերջ տալով խարխափումի, ընդգրկելով իրաւութիւն եւ որակ, միշտ Շաւարշ Նարդուհիի իւրացուցած եւ կրկնած Ֆրանսական առածի իմաստութեամբ, որ՝ «կատուին կատու պէտք է ըսել», (il faut appeler un chat un chat), որ մեր պատմութեան ներկայ փուլին կը նշանակէ՝ դադրեցնել ճապկումները, ընդունիլ ճախողութիւններու պատասխանատուութիւնը, վերանորոգել, միանալ եւ բուցեցուիլ։

Միշտ պէտք է յիշել ԵՄԻՆԵՍՔՕ-ի նախկին տնօրէն Ֆետերիքօ Մայորի պարզ իմաստութիւնը, որ՝ «Վաղը միշտ ուշ է»։

Ուշանալ՝ կը նշանակէ քարափին վրայ մնալ երբ կ'անցնին գնացքները, անցած կ'ըլլան գնացքները։

Ֆրանսական հեռատեսիլը երկու օր շարունակ եւ օրը քանի մը անգամ յիշեցուց Հայաստանի վարչապետին ահազանքը։

Լսելէ ետք ի՞նչ պիտի ընեն «բարեսէր» օտարները։

Ի՞նչ պիտի ընէ «համաշխարհային» դարձած միամտացած հայութիւնը։

Առաջին հերթին, մեր ժողովուրդը իրատեսութեամբ պէտք է դադրի ամէն բնոյթի աւեր գործող կողմնապաշտութիւններէ եւ անպաշտպանելի պաշտպանելէ։

Նախորդ դարու իմաստուն մը ըսած էր, որ հարցումները աւելի կարեւոր են, քան՝ անոնց տրուած պատասխանները։

Եթէ քաղաքակիրթ համարուած աշխարհը յարգած ըլլար ինքզինք եւ իր խոստումները, յարգած ըլլար իրենց ստորագրած Սեւրի դաշնագիրը, այսօր Հայաստանի վարչապետը չէր խօսեր ցեղասպանութեան սպառնալիքի եւ հայ ժողովուրդին դէմ շղթայագերծուելիք երրորդ պատերազմի մասին։ Այս պէտք է ըսել բանակցութիւնները հիւրընկալողներուն։ Ըսի՞նք, կ'ըսենք, թէ՞ ինքնագոհութիւն կը հովհարենք կրկնուող անհետեւանք «ճանաչում»-ներով եւ հակուրութեամբ չենք տեսնել «լուռ մեղսակցութիւնները»։

Քաղաքականութիւն խաղալու համար կենսական է յեղափոխել նոյնինքն քաղաքական միտքը՝ նուաճելով ՄէյՈՒԹԻԻՆ, որ նախապայմանն է նկատուելիութեան ուժի ստեղծման, ինչ որ այսօր չկայ, չունինք։

Աւելի իրապաշտութեամբ. ինչո՞ւ չբանակցել ոչ թէ մէկ միլիոնի, այլ տասը, քսան եւ թերեւս աւելի միլիոններու, գումարած անժամանցելի ոճրի միլիոններու անուճով եւ անոնց ԻՐԱԽՈՒՆՔԻՆ համար։

Պա՛րզ. ընթանալ ՄէյՈՒԹԵԱՄԲ՝ ԱԶԳԻ ՈՒՂԻՈՎ։

Յ. ՊԱԼԵԱՆ

www.horizonweekly.ca

CAMAM

3401, Olivar Asselin, Montréal, Qc H4J 1L5
 397, boul. des Prairies, Laval, Qc H7N 2W6
 45 Hallcrown Place, Willowdale, On M2J 4Y4

To donate online www.camam.org

RADIO
VOICE OF VAN
 FM 94.7

Լիբանանահայութեան ձայնը՝
 Վանայ ձայնը
www.voiceofvan.net

Voyages
HAIG
 Travel

Ձեր բոլոր ճամբորդական
 Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
**ԼՍԻՄԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԻՆ ԵՒ
 ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

*Նոր Յացէ՛լ
 Voyages Haig Travel
 4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

PERMIS DE QUÉBEC

Tel: + 1 514-284-7676
 Email info@haigtravel.ca



ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Ջ. ՏԱՐԻ, ԹԻՒ 9, Օգոստոս 2023



ՎԵՐԱՓՈԽՈՒԻԼ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ՅԱԽԵՐԺՕՐԷՆ ՄԻԱՆԱԼՈՒ

Տօնն Վերափոխման Սուրբ Աստուածածնի: Տօնն Յոյսի եւ Աստուածային Խոստումի: Աստուածամօր մարմնապէս դէպի երկինք ճամբորդութեան հրաշալի եւ եզակի դէպքի ոգեկոչումն է: Աստուծոյ կողմէ Աստուածամօր տրուած վերջին պատիւն է:

Ս. Կոյս Մարիամի առաքելութեան ճանապարհորդութիւնը կը սկսի Գաբրիէլ հրեշտակապետին տուած «Այո» հնազանդ եւ խոնարհ պատասխանէն, երբ պատրաստակամ եղաւ դառնալու Օրհնեալ Կինը բոլոր կանանց մէջ եւ մանաւանդ դառնալու անօթը մարդկութեան, սրբութեամբ ու անարատութեամբ ծնելով ազատարար մը՝ Փրկիչը աշխարհին:

Ս. Կոյս Մարիամ ներշնչման օրինակը դարձաւ մարդկութեան, ամբողջական վստահութեամբ մօտենալու Աստուածային կոչումին եւ նախախնամութեան: Այո՛, Ս. Կոյս Մարիամի անձնուէր, հնազանդ և անսասան հաւատքով լեցուն կեանքը կը ոգեշնչէ մեզ, հնազանդելու Աստուծոյ կամքին, մեր ամէնօրեայ կեանքը իմաստաւորելու եւ հաւատարիմ մնալու մեզի վստահուած կոչումին մէջ:

Այսօր Ս. Կոյս Մարիամի Վերափոխման տօնը անգամ մը եւս կու գայ յիշեցնելու մեզմէ իւրաքանչիւրին, որ մեր կեանքի վերջնական նպատակը՝ Աստուծոյ հետ յաւերժօրէն միացած ըլլալն է:

Սուրբ Կոյս Մարիամի երկինք վերափոխումը հրաւիր մըն է իւրաքանչիւրիս մտածելու մեր սեփական ճակատագրին եւ մեզի համար պատրաստուած եւ սպասուած յաւիտենական փառքի մասին:

Սուրբ Կոյս Մարիամի կեանքի օրինակը մնայուն ներշնչման աղբիւր եղած է, ապրելու խոնարհութեամբ, նուիրումով եւ Աստուծոյ ծրագրին նկատմամբ վստահութեամբ մօտենալու: Նման առաքինութիւններով զինուած արժանի կ'ըլլանք Աստուծոյ բարեհաճութեան եւ յոյսը կ'ունենանք յաւիտենական կեանքին հասնելու:

Եկէ՛ք, միասնաբար աղօթենք եւ Ս. Աստուածածնի բարեխօսութեան դիմենք, որպէսզի Միածին Որդին Աստուծոյ մեզ զօրացնէ մեր ճշմարիտ հաւատքին մէջ:

Եկէ՛ք վերափոխենք մեր կեանքը Աստուածամօր օրինակով՝ աղօթքով, անարատ կեանք ապրելով, հնազանդելով Աստուծոյ կամքին եւ ամբողջական վստահութիւն ցուցաբերելով Իր նկատմամբ:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայ Եկեղեցին մեծ յարգանք տածած է Աստուածածնի անձին ու դերին հանդէպ: Հայ Եկեղեցոյ շարականագիրները ընդարձակ տեղ տուած են Աստուածածնի փառաբանութեան, բարեխօսութեան, որոնց ընդմէջէն արտայայտած են անոր անձին մասին իրենց ըմբռնումը եւ շարականներուն ընդմէջէն ցոյց տուած են Հին Կտակարանեան մարգարէութեանց կատարումը եւ Հին Կտակարանին մէջ եղած նշաններուն հետ անոր կապակցութիւնը, օրինակ՝ «Ուխտի Տապանակ», «Եղեմական Դրախտին մէջ Տնկուած Կեանքի Ծառ», «Փակեալ Դուռ», «Երկնային Հացի Ոսկեայ Սափոր», «Բոլորին Փրկութեան Մայր», եւ այլն:

Քրիստոնէական սուրբերու շարքին մէջ իր առանձնայատուկ տեղը ունի մեր Սուրբ Կոյս Մարիամը: Ան հրաժարելով աշխարհիկ կեանքի բազմատեսակ զուարճութիւններէ, իր սեփական կեանքը նուիրագործեց Աստուծոյ ծառայութիւն մատուցանելով: Սուրբ Կոյսը երբ Գաբրիէլ Հրեշտակապետէն լսեց Աստուծոյ ծրագրին անտիպը, բերկրանքով ըսաւ. «Աստուծոյ աղախինն եմ եւ, թող քու ըսածդ ըլլայ» (Ղուկաս 1.38): Մարիամ զոհողութեամբ, պատրաստակամութեամբ ու Տիրոջ հանդէպ իր ունեցած հաւատքով, արժանի եղաւ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐ կոչուելու եւ դառնալու Աստուածային փրկագործական ծրագրին կամուրջը:

Խնդրենք Սուրբ Կոյս Մարիամէն, որ Իր Որդւոյն՝ Յիսուս Քրիստոսի մօտ մեզի համար բարեխօս ըլլայ: Մեր ծայները միացնենք շարականագիր հայրապետներու ծայներուն եւ աղօթենք. «Աղաչէ՛ մեզի համար քեզմէ մարմնացած Աստուծոյն, որ ներէ՛ մեզ, անտեսէ՛ մեր յանցանքները եւ օգնական ըլլայ՝ դիմադրելու հակառակորդին պարտերազմի ժամանակ, կ'աղաչենք, Մայր Սուրբ բարեխօսէ՛»:

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Տէրը պիտի գովաբանեմ. ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծոմով, իմ Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իր աղախինին հեզութիւնը: Ասկէ ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինձի, քանի հզօրն Աստուած ինձի համար մեծամեծ գործեր կատարեց. սուրբ է անունը անոր»:

Ղուկաս 1:46-49

“My soul glorifies the Lord, and my spirit rejoices in God my Savior, for he has been mindful of the humble state of his servant. From now on all generations will call me blessed, for the Mighty One has done great things for me—holy is his name.”

Luke 1.46-49





ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՒՍԱԴՐՈՒՅ

ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Ֆրանսացի հայագետ Անթուան Մէյէ կը վկայէ՝ «Հայոց այբուբենը գլուխգործոց է»:

Հայոց կամ հայկական գիրը հնչյունային գրանշաններու համակարգ է, զոր ստեղծած է Մեսրոպ Մաշտոց, ուստի այդ գիրերը կը կոչուին նաեւ մեսրոպեան կամ մաշտոցեան: Մեսրոպ Մաշտոց առայսօր այբուբեն ստեղծած ամենայայտնի հեղինակն է:

Յենուելով հայագիր հնագոյն մատեններու, վիպագրութիւններու, Մաշտոցի աշակերտներ Կորինի եւ Մովսէս Խորենացիի վկայութիւններուն վրայ՝ կարելի է տարբերել հայկական գրիի ստեղծման քանի մը փուլ:

Առաջին փուլին Մաշտոց բացայայտած է հայերէնի բանաստեղծական հնչյունական համակարգը:

Երկրորդ փուլին ստեղծած է հայոց գիրերը՝ 36 տառ:

Երրորդ փուլին Մաշտոց դասատրած է տառերը եւ ճշտորոշած անոնց թուային արժէքները, եւ տուած համապատասխան անուն:

Հայկական գիրը տառերու կառուցուածքով ու դասատրութեամբ ինքնատիպ է, ունի նաեւ թուային արժէք՝ օրինակ Ա-1, Բ-2, Ժ-10...:

Անկա աշխարհի հագուագիտ, ամենակատարեալ ու կենսունակ տառատեսակներէն մէկն է. գործածութեան մէջ ըլլալով անէլի քան 1600 տարի՝ հայոց այբուբենը կրած է չնչին փոփոխութիւն: Մաշտոցեան կատարեալ 36 տառերէն բաղկացած այբուբենին միջնադարուն անլուրտեցան միայն «օ» եւ «ֆ» տառերը:

Պատմաբան Յակոբ Մանանդեանի վկայութեամբ՝ «Մեսրոպ Մաշտոցի գիտը, անտարակոյս, այն հզօր գէնքն էր, որուն շնորհիւ հայ ժողովուրդը պահպանեց իր գոյութիւնը Ե. դարու մեծ պայքարին ժամանակ եւ մտնելով քաղաքակրթուած հնագոյն ժողովուրդներու ընտանիքին մէջ՝ զարգացուց իր ինքնուրոյն մշակոյթն ու շատ հարուստ գրականութիւնը»:

Հայոց մեսրոպեան գիրերով ստեղծուած է հարուստ գրականութիւն, որ արժէքատուր ասանդ ունի համաշխարհային մշակոյթի գանձարանին մէջ:

Մաշտոցի յայտնի աշակերտ Կորին իր «Վարք Մաշտոցի» գիրքին մէջ կը վկայէ, որ վաղ միջնադարուն ստեղծուած վրացերէնի, աղուաներէնի այբուբենները նոյնպէս ստեղծած է Մեսրոպ Մաշտոց՝ իր ստեղծած հայերէն այբուբենի հիման վրայ: Լիարժէք է նաեւ Մաշտոցի ստեղծած ուղղագրութիւնը, որ տարիներ ետք անգամ չէ հինգած:

Շատերու համոզմամբ, հետազօտութիւններու իբրեւ արդիւնք, ապացուցուած է, որ հայոց այբուբենը կ'ընդգրկէ խորհուրդ, Աստուածային կարեւոր ուժ եւ իւրաքանչիւր տառ կը նշանակէ կարեւոր բառ մը:

Հայոց Աստուածատուր Այբուբենը



**Արարիչ Բովանդակ, Գոյութեան Բառատուր,
Երկնային Զօրատուր Էութիւն.
Ըստ հուն Թագաւոր՝
Փամանակի, Բրբրի, Լայսի,
Խաարի, Ծովի, Կենդանիների, Համայնի.
Չայն Դօղանքող, Գնմարան Մտաց՝
Յիսուս Նագովրդի.
Շնորհ Ազնունջ, Չարին Պատժող,
Չանաւեր Թարբի, Սրբոց Վկայ՝
Տէր մե՛ր Յանկայի ՈՒ Փառքի Քրիստոս:**



Հակառակ այս բոլորին՝ Պատմահայր Մովսէս Խորենացիի վկայութեամբ՝ «Մտքով՝ ստեղծող, խօսքով՝ պայծառ, գործով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, սորվեցնելու մէջ՝ չճանճրացող, Մեսրոպ Մաշտոցի վարքին մէջ ամբարտաւանութիւնը եւ մարդահաճութիւնը երբեք չկրցան տեղ գտնել»:

Մեսրոպ Մաշտոց մահացած է 440 թուականին: Անոր մարմինը, իշխան Վահան Ամատունիի ջանքերով, տեղափոխուած ու թաղուած է Օշականի մէջ եւ երեք տարի անց՝ գերեզմանին վրայ կառուցուած է եկեղեցի: 1875-79-ին այդ եկեղեցոյ տեղը կառուցուած է Մեսրոպ Մաշտոց Եկեղեցին, որուն բեմի տակի խորանին մէջ անոր գերեզմանն է:

Հայ Եկեղեցին Մեսրոպ Մաշտոցը դասած է իր սուրբերու շարքին: Ան սրբացուած է դեռ կենդանութեան օրերուն: Մերունդները Մաշտոցը անուանած են Երկրորդ Լուսատրիչ Հայոց, որովհետեւ Գրիգոր Լուսատրիչը քրիստոնէացուցած է հայ ազգը, իսկ Մեսրոպ Մաշտոց ազգայնացուցած է քրիստոնէութիւնը:

Նայիրի Մկրտիչեան
(Վերջ)

ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ ԱՐՈԹՔԻ ՎԻՃԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

«Աղօթքի ժամանակ քրիստոնեաներուն պարտաւիշխներուն եւ կարարելութեան աստիճաններուն մասին: Արդեօք կարելի՞ է, որ քրիստոնեաներ հասնին կարարելութեան աստիճանին»:

Մարդ իր սենեակը մտնելով՝ կրնայ ծնրադրել եւ իր սիրտը լեցուիլ աստուածային կրակով եւ հոգին ալ կրնայ Տիրոջմով ցնծալ եւ ուրախանալ, ինչպէս հարսը կ'ուրախանայ փեսային հետ, համաձայն Եսայիի մարգարէութեան, որ կ'ըսէ. **«Ինչպէս փեսան հարսին վրայ կ'ուրախանայ, այնպէս քու Աստուածը քու վրայ կ'ուրախանայ»** (Ես 65.2):

